

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ԴԵՐՆԵՒԿ ԴԵՍԻՐՃՅԱՆԻ ՄԱՍԻՆ, կազմեց և առաջարանը գրեց՝ Գ. Մադոյան, Երևան, «Հայաստանի հանրագիտարան», 1997, 380 էջ:**

Հայ հուշագրությունը թեև հին ավանդույթներ ունի, սակայն նրա համակարգված և գիտական հրատարակությունը մեզանում նոր է սկզբնավորվել: Ընչու է, ժամանակին մասնույում և առանձին գրքերով տպագրվել են նաև հուշեր ու ինքնակենսագրական վեպեր, ճամփորդական նոթեր, ուղեգրություններ ու օրագրություններ, բայց դրանց հրատարակությունը չի եղել պարբերական:

Հայ իրականության մեջ հուշերի առաջին գիտական հրատարակությունը կատարել է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղը, որը 1940 թ. տպագրել է Հ. Մուրադյանի կազմած ու ծանոթագրած «Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին» հուշերի ռուսերեն ժողովածուն: Մեկ տարի անց՝ 1941-ին, այն տպագրվել է նաև հայերեն՝ լրացված ու բարեփոխված տեսքով (128 էջ): Սակայն այդ ձեռնարկումը Հայրենական մեծ պատերազմի հետևանքով ընդհատվել է և հետագայում, շուրջ երկու տասնամյակ մեզանում հուշերի առանձին ժողովածուներ չեն տպագրվել, եթե չհաշվենք հայ դասա-

կան գրողների երկերում այդ տարիներին լույս տեսած հուշերը: Միայն 1960-ական թթ. սկսում են տպագրվել հուշերի նոր գրքեր՝ Այդ շրջանում ռուսների օրինակով «Հայպետհրատը» հիմնադրում է «Գրական հուշերի մատենաշարը», որի առաջին գիրքը մկիրված է Վահան Տերյանին<sup>1</sup>:

Հետագայում մի այդպիսի մատենաշար էլ ստեղծել է Հայաստանի գիտությունների ակադեմիան, որի հրատարակությանը լույս են տեսել «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» (1969), «Բաֆֆին ժամանակակիցների հուշերում» (1986) և «Վարդան Աճեմյանը ժամանակակիցների հուշերում» (1997) արժեքավոր հուշապատումները:

Հայ դասական գրողների գրական ժառանգությունը հրապարակ հանելու շնորհակալ գործին դեռևս 1940-ին ձեռնամուխ է եղել նաև ՀԽՍՀ կուլտուրայի նախարարության գրականության և արվեստի թանգարանը (հետագայում՝ Եղիշե Չարենցի անվան), որը մինչև օրս «Գրական ժառանգություն» ընդհանուր վերատառությամբ տպագրել է 16 ժողովածու<sup>2</sup>, որոն-

<sup>1</sup> Տե՛ս «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» (1960), «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին» (1961), Ի դեպ, Չարենցի մասին հուշերի այս առաջին գրքին հետևում են նաև երկրորդ՝ «Հուշեր Եղիշե Չարենցի մասին» (1983) և երրորդ՝ «Չարենցի հետ» (1997) ժողովածուները, որոնք, անշուշտ, չեն սպառում մեծ քանաստեղծի մասին հիշողությունները: Այդ ընթացքում են տպագրվել նաև Ստ. Չորյանի «Հուշերի գիրք»-ը (1958), Գ. Լևոնյանի «Հուշեր» (1959), Տ. Հախումյանի «Գրական հորվածներ և հիշողություններ» ռուսերեն երկհատորյակը (1965-1970), նույնի «Հուշեր» (1987), Վ. Նորենցի «Հուշեր և արձագանքներ» (1968), Աշ. Հովհաննիսյանի «Հուշեր և քննադատումներ» (1969), Ծ. Թորոսյանի «Հոգեթով հույզեր» (Թր., 1975), Մ. Ջարամյանի «Ապրած տարիներ» (Թր., 1978), Հր. Հովհաննիսյանի «Հուշերի երեկո» (1996) և այլ հուշապատումներ: Վերջին տասնամյակների ընթացքում շատ հետաքրքիր հուշեր են գրվել Ավ. Իսահակյանի, Ստ. Չորյանի, Գ. Մահարու, Հովհ. Շիրազի, Պ. Սևակի, Վ. Մարոյանի և այլ դասականների մասին:

<sup>2</sup> Տե՛ս «Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում» (1964, 584 էջ): Ի դեպ, նույն մատենաշարով հետագայում տպագրվել են նաև «Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում» (1967), «Ալիշանը ժամանակակիցների հուշերում» (1974), «Ժամանակակիցները Գաբրիել Մունդուկյանի մասին» (1976) ժողովածուները: Երևանի համալսարանի հրատարակությանը լույս է տեսել նաև Ա. Շարուրյանի կազմած ու ծանոթագրած «Պետրոս Դուրյանը վավերագրերում և ժամանակակիցների հիշողություններում» (1982) արժեքավոր գիրքը:

<sup>3</sup> Այդ մատենաշարի առաջին գիրքը տպագրվել է 1940-ին ԽՍՀՄ ԳԱ Արմֆանի կողմից, որը մկիրված է Մ. Նալբանդյանի, Ղ. Աղայանի, Վ. Փափազյանի, Ալ. Շատուրյանի անտիպ նամակներին ու վավերագրերին: Այդ նույն հատորում է գետեղված նաև Պ. Պողոսյանի «Հուշիկները»: Հետագայում ՀԳԱ հրատարակչությունը, երբ տպագրության է պատրաստել հիշյալ մատենաշարի հերթական գիրքը, ըստ երևույթին, նրա կազմողները մոռացել կան վրիպել են «Գրական ժառանգության» առաջին գրքի գոյության փաստը և պատրաստված հերթական ժողովածուն և ս տպագրել են որպես առաջին հատոր: Առ այսօր այդ մատենաշարով լույս է տեսել 15 ժողովածու, որոնք 1940-ին հրատարակված գրքի հետ մեկտեղ կազմում են 16 հատոր:

ցից 4-ը հուշեր են<sup>4</sup>: Կարևոր ենք համարում նշել, որ այդ գրքերում տեղ են գտել Մ. Թադևոսյանի, Գ. Ախվերդյանի, Ղ. Ալիշանի, Գ. Վարուժանի, Ալ. Սպենդիարյանի, Ջ. Եսայանի, Ը. Կուրդիմյանի, Դ. Դեմիրճյանի, Ա. Չոպանյանի նամակներն ու վավերագրերը, նրանց ժառանգության անտիպ էջերը:

Պակաս կարևոր չեն և թատերական գործիչների, նկարիչների, գեղարվեստի մյուս բնագավառների աշխատողների հուշերն ու օրագրությունները: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Հայկական թատերական ընկերության և այլ հրատարակչությունների կողմից լույս են ընծայվել Գևորգ Չմշկյանի, Հովհ. Աբելյանի, Միրանուշի, Հովհ. Ջարիֆյանի, Վահրամ Փափազյանի, Մարտիրոս Մարյանի, Վաղարշ Վաղարշյանի, Դավիթ Գուլազյանի, Գուրգեն Ջանիբեկյանի, Շարա Տալյանի, Դավիթ Մալյանի, Պահարեի և այլ արվեստագետների երկերի և հուշագրությունների տասնյակ հատորներ, որոնք հաճախ ներառում են նաև գրական կյանքի ու գրողների մասին հարուստ տեղեկություններ: Հուշերի և ուղեգրությունների բազմաթիվ գրքեր են տպագրվել նաև Սփյուռքում:

Ահա հուշագրական այսպիսի հարուստ ժառանգությանը ավելացավ ևս մեկ հատոր. լույս տեսավ «Ժամանակակիցները Դեբեմիկ Դեմիրճյանի մասին» հուշապատումների ժողովածուն, որը խնամքով և գիտական պատշաճ մակարդակով վաղուց տպագրության էր պատրաստել հմուտ բանասեր ու բնագրագետ Գևորգ Մադոյանը (1911-1990):

Գ. Մադոյանը 1953 թ. Ախալքալաքից տեղափոխվելով Երևան և ավելի քան երեք տասնամյակ աշխատելով Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում՝ լույս է ընծայել Գ. Ախվերդյանին, Հ. Պարոնյանին, Դ. Վարուժանին նվիրված արժեքավոր աշխատություններ, զբաղվել է հայ դասական գրողների ժառանգության հրատարակման խնդիրներով: Այդ պրպատումների ընթացքում 1970-80-ական

թթ. նա առավել մեծ ուշադրություն է դարձրել Դ. Դեմիրճյանի ստեղծագործություններին, խնամքով հավաքել է ականավոր գրողի անտիպ գեղարվեստական երկերը, նամակները, վավերագրերը, ժամանակակիցների հուշերն ու հողվածները նրա մասին, որոնց մի մասը նա ուղեկցող հողվածներով ու վերլուծություններով հրատարակել է պարբերական մամուլում: Հետագայում այդ ամենն ի մի բերելով՝ լույս է ընծայել «Դեբեմիկ Դեմիրճյան» շահեկան ուսումնասիրությունը, ինչպես և «Դ. Դեմիրճյան՝ Անծանոթ էջեր» գիրքը, երկուսն էլ՝ 1986-ին: Գ. Մադոյանը կազմել ու ծանոթագրել է հայ մեծ դասականի «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության 14-րդ հատորը (1987 թ.):

Դեբեմիկ Դեմիրճյանի մասին ժամանակակիցների գրած հուշերի ներկա ժողովածուն պատրաստելու աշխատանքները Գ. Մադոյանն սկսել է դեռևս գրողի ծննդյան 100-ամյակի նախօրյակին՝ նպատակ ունենալով 1977-ին այն տպագրել որպես հոբելյանական նվեր, որը, սակայն, հանգամանքների բերումով, չի իրականացվել:

Արդ, ծրագրվածից քսան տարի ուշ և կազմողի մահվանից յոթ տարի անց տպագրված հուշերի հիշյալ գիրքը երբեք չի կորցրել իր այժմեականությունն ու հրատարությունը և մի գեղեցիկ նվեր է մեծ գրողի ծննդյան 120-ամյակին: Գրքում գետեղված 50-ից ավելի հիշողությունների ու նյութերի մի զգալի մասը քաղված է պարբերական մամուլից ու այլևայլ ժողովածուներից<sup>5</sup>, իսկ մի մասն էլ եղել է անտիպ, որոնք ժամանակին գրվել են գրականության և արվեստի թանգարանի նախածեղծությամբ ու անձամբ գիրքը կազմողի պատվերներով ու հորդորներով:

Ժողովածուն կազմողը խմբավորել է եղած նյութերը, բաժանել երկու մասի ու գրել է առաջաբանը: Առաջին մասում ընդգրկել է Դ. Դեմիրճյանին հասցեագրված նամակներ, ուղերձներ, ինչպես նաև նրա մահվան

<sup>4</sup> Դրանք են՝ «Ժամանակակիցների հուշերը հայ դասական գրողների մասին» (գիրք 8, 1975), Ալ. Խսահակյանի «Հիշատակարանը» (գիրք 10, 1987), Ե. Շահագոյի «Հիշողություններ և դիմաստվերներ» (գիրք 14, 1980), ինչպես նաև վերը նշված «Գրական ժառանգություն» մատենաշարի առաջին գիրքը (1940):

<sup>5</sup> Տպագրված հուշերը հիմնականում հանվել են «Սովետական Հայաստան», «Կոմմունիստ», «Գրական թերթ», «Հայրենիքի ձայն», «Երեկոյան Երևան» թերթերից ու «Սովետական գրականություն», «Լիտերատուրնայա Արմենիա», «Խորհրդային արվեստ» և «Գարուն» հանդեսներից, իսկ մի մասն էլ՝ գրքերից, որոնցից արժե հիշատակել Վահրամ Ալազանի «Հուշերը» (1967 թ.), Հովհաննես Պողոսյանի «Արձագանքը» (1973 թ.), Ռուբեն Ջարյանի «Հուշապատումը» (գիրք առաջին, 1975 թ.) և այլն:

ու հուղարկավորութեանը վերաբերող նյութեր, մահախոսականներ, որոնց մեջ փորձ է արվում արժեքավորելու համաժողովրդական ընդունելություն ունեցող գրողի վաստակը, ցույց տալու նրա մեծությունը ոչ միայն հայ, այլև խորհրդային բազմազգ գրականության ասպարեզում: Կազմողը Դեմիրճյանին ուղղված հարյուրավոր նամակներից ընտրել է միայն երեքը՝ ամենաբնորոշողները, որոնցից առաջինը 1920 թ. հուլիսի 7-ին Բաթումից գրել է Վահան Թոթովենցը, երկրորդը պատկանում է Եղիշե Չարենցի գրչին, որը 1927 թ. մայիսի 7-ին ուղարկվել է Փարիզից, իսկ երրորդը՝ 1946 թ. դեկտեմբերի 30-ին Թբիլիսիից գրել է վրաց գրող-դրամատուրգ Շավվա Գաղիանին: Այդ նամակները, հրապարակվելով առաջին անգամ, կրկին Դեմիրճյանին բնութագրում են որպես իր ժամանակի գրական-թատերական կյանքի գործուն մասնակից, մշակութային հրատապ խնդիրների լուծմանը միջամտիս ու սրտացավ արվեստագետ, որի գործունեության շտապիղները Հայաստանից ձգվում էին շատ հեռուներ:

Այդ նույն բաժնում են տպագրված նաև Դ. Դեմիրճյանի գրական գործունեության 50-ամյակին նվիրված հոդվածներից երեքը, որոնց հեղինակներն են Ավ. Իսահակյանը, Մտ. Չորյանը և Ս. Տարոնցին: Դրանք ժամանակին տպագրվել են «Գրական թերթում»: Հաջորդ երեք հոդվածները պատկանում են Ն. Չարյանի, Հր. Քոչարի և վրաց գրականության դասական Կոնստանտինե Գամսախտորդիայի գրչին, որոնք ականավոր գրողի մահվան բոթն առնելով՝ սրտի խոր ցավով գրել ու տպագրել են մամուլում: Հիշյալ բաժինը եզրափակվում է «Դերենիկ Դեմիրճյանի վերջին ուղին» վերտառությամբ հաղորդագրությամբ, որն ընթերցելով՝ մենք կարծես տեղափոխվում ենք սրանից չորս տասնամյակ առաջ՝ 1956 թ. դեկտեմբերի 8-ը և մասնակից դառնում այդ օրը տեղի ունեցած սգո թափոթին ու հուղարկավորությանը:

Այս բաժնի նյութերում կերտվում է Դեմիրճյանի ստեղծագործական դիմանկարը, և մեր դեմ վեր է հանում մեծ գրողն ու մտածողը, Հայաստանում ու մյուս հանրապետություններում ջերմ համակրանքի ու սիրո արժանացած հայրենասերն ու քաղաքացին, որի համար թանկ է եղել իր ժողովրդի անցյալն ու ներկան, նրա հերոսական

պատմությունը:

Գրքի երկրորդ բաժինը, որն ունի «Հուշեր» ընդհանուր խորագիրը, առավել ընդարձակ է: Այստեղ ժողոված են Դ. Դեմիրճյանի մասին եղած հուշերն ու գրառումները, որոնց հեղինակները գրողներ, գրականագետներ ու արվեստաբաններ են, ինչպես և գրողի մերձավորներ ու նրան մոտիկից ճանաչող անձինք, ովքեր տարբեր ժամանակներում թղթին են հանձնել իրենց անմիջական տպավորությունները, հակիրճ բնութագրումները և երբեմն էլ՝ ընդարձակ հիշողությունները: Այդ ամենն այսօր առավել ամբողջական ու լրիվ են դարձնում Դ. Դեմիրճյանի կերպարը, մեզ ծանոթացնում են նրա մտքերին ու հղացումներին, նրան ներկայացնում այնպես, ինչպես որ եղել է շրջապատում, կյանքում ու կենցաղում, և հաճախ էլ զննահատում են գրողի ստեղծագործությունները:

Այս բաժնում նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով, բայց ոչ թե ըստ դրանց գրության տարեթվերի, այլ՝ ըստ Դ. Դեմիրճյանի ապրած կյանքի ու գործունեության շրջանների: Առաջին հուշը, որը Դեմիրճյանի վաղ շրջանի մասին պատմող հավաստի և անմիջական պատմությունն է, պատկանում է նրա մտերիմ բարեկամ, հայ մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանի գրչին: Իսահակյանը իրեն հատուկ վարպետությամբ ու անմիջականությամբ պատմում է Դեմիրճյանի հետ իր ունեցած հանդիպումների մասին, թե ինչպես իրենք՝ «երիտասարդության սեմին դեռ նոր ոտք դրած», դարձել են մտերիմ ընկերներ, շրջել են Շիրակի դաշտերում, եղել են իր ծննդավայր Ղազարապատում, ապա Անիում և այլուր: «Գյուղում շատ հաճելի ժամանակ էինք անցկացնում,- գրում է Իսահակյանը,- կարողում էինք, գետում լողանում, դաշտերում շրջում...»: Եվ այդպես, նրանց այդ ջերմ ընկերությունն ու մտերմությունը շարունակվել է մինչև իրենց կյանքի վերջը:

Ավ. Իսահակյանի հուշերը գրված լինելով Դ. Դեմիրճյանի ծննդյան 75-ամյակի առթիվ (առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթում», 1977 թ., հ. 20) ամբողջական պատկերացում են տալիս նաև մեծ վիպասանի անցած ուղու, նրա աշխարհայացքի, ստեղծագործական ունակությունների ու հաջողությունների մասին, առանձին դրվագներ է ներկայացնում Ղ. Աղայանի և

Հ. Թումանյանի հետ Թիֆլիսում, «Վերնատանը» իրենց ունեցած հանդիպումներից ու գրույցներից:

Գրողի կյանքի վաղ շրջանի, Ախալքալաքում երկար ժամանակ անխաթար պահպանված հայրական տան պատկերներն են վերակենդանանում ավելի ուշ շրջանի հուշագիրներից մեկի՝ ժողովածուն կազմող Գ. Մաղոյանի հուշերում: Դրանք ծնվել են իր մեծ հայրենակցի հետ ունեցած հանդիպումների անմիջական տպավորությունների տակ: Հուշագիրը Դեմիքոյանի հետ ունեցած իր մտերմիկ գրույցների ժամանակ նրա սրտում արթնացրել է վաղուց անցած ու տարիների մշուշով ծածկված մանկական հիշողությունները, դեպքերն ու դեմքերը և այդ ճանապարհով կարծես վերականգնել է գրողի մանկության ու պատանեկության շրջանի կենսագրական շատ մանրամասներ՝ մասամբ լրացնելով այդ շրջանի մասին հուշերի պակասը:

Ինչպես հայտնի է, Դ. Դեմիքոյանն իր նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում՝ Ախալքալաքի հայոց ծխական դըպրոցում, ապա՝ Արդահանում, այնուհետև Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղից տեղափոխվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Հետագայում նա իր ուսումը շարունակել է Մոսկվայի երաժշտական ուսումնարանում, բարձրագույն կրթություն է ստացել Ժնևի համալսարանում: Այդ տարիներին, սկսած 1890-ական թվականներից, նա սերտ կապեր է հաստատում հայ առաջատար գրողների հետ, ծանոթանում է եվրոպական և ռուսական առաջադեմ երիտասարդությանը, հաղորդակից դառնում նրանց գաղափարներին և այդ մթնոլորտում էլ ձևավորվում է որպես բանաստեղծ: Այս շրջանին վերաբերող հուշերը, ցավոք, չափազանց քիչ են, եղածներն էլ կցկտուր հիշատակումներ են՝ ցրված տարբեր հեղինակների գրառումներում:

Գրողի՝ 1910-ական թվականների գործունեության վերաբերյալ հետաքրքիր հուշեր են գրել Հոփսիսիմե Պողոսյանը, Սաքո Սուքիասյանը, Տիգրան Հախումյանը, Գուրգեն Մահարին, Պահարեն և ուրիշներ: Դրանք հիմնականում վերհանում են Դեմիքոյանի գործունեության թիֆլիսյան շրջանը՝ սկսած դարասկզբից մինչև երկրորդ տասնամյակի ավարտը, երբ Դեմիքոյանը ուսուցչություն էր անում Թիֆլիսի Հովան-

յան օրիորդաց դպրոցում՝ իր գործուն մասնակցությունը բերելով տեղի գրական-մշակութային կյանքին:

Մյուս հուշագրողները՝ Հմայակ Սիրաս, Վահրամ Ալազան, Ռուբեն Զարյան, Սարգիս Մելիքսեթյան, Աղավնի և ուրիշներ, արդեն խոսում են Դեմիքոյանի կյանքի ու գործունեության երևանյան շրջանի մասին՝ 1920-ականներից ընդհուպ մինչև Հայրենական մեծ պատերազմը:

Հուշագիրների «երրորդ սերունդը» (Ս. Խանզադյան, Հր. Հովհաննիսյան, Վ. Խեչումյան, Վ. Նալբանդյան, Վ. Արամյան, Ն. Մուրադյան, Գ. Բալասանյան, Հր. Հրահան, Ռ. Աթայան, Ը. Վարսյան, Հ. Բեկնազարյան և ուրիշներ) ականատես է եղել Դ. Դեմիքոյանի կյանքի վերջին շրջանին: Նրանցից ոմանք, ռազմաճակատից վերադառնալով, մեծ դասականի հետ շարունակել են իրենց նախկին մտերմությունը, իսկ ոմանք էլ նորոնոր են սկսել ծանոթանալ ու բարեկամանալ արդեն Հայաստանի կուլտուրայի վաստակավոր գործիչ դարձած (1940 թ.) և իր «Վարդանանք» պատմավեպով (1943-1946 թթ.) հռչակված գրողի հետ, որը շուտով ընտրվում է նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (1953 թ.):

Հուշագիրների այս սերունդին են պատկանում նաև սփյուռքահայ գրող Վահե Վահեյանն ու ռուս գրականագետ Բերտա Բրայնինան: Վերջինս, երկար ժամանակ ստեղծագործական կապերի մեջ գտնվելով Դ. Դեմիքոյանի հետ, ավելի ամբողջական ու համապարփակ է ներկայացնում նրան որպես գրող, հումանիստ ու ինտերնացիոնալիստ: Նա հիացմունքով է խոսում «Վարդանանք» պատմավեպի մասին, ցույց տալիս, որ Դեմիքոյանը ազգային մեծ գրող է, որի ստեղծագործություններում խտացված տեսնում է «հայ ժողովրդի լավագույն գծերը՝ նրա փիլիսոփայական ինքնախորասուզվածությունը և հայրենասիրական զգացման քնարական կիրքը»: Բրայնինան վկայում է նաև, որ Դեմիքոյանը, ջերմորեն սիրելով հարազատ ժողովրդին և այն ամենը, ինչ հայկական է, ընդհուպ մինչև կենցաղային մանրուքները, մեծ հարգանքով, խոր ուշադրությամբ է վերաբերվել այլ ազգերի մշակույթներին: Նրան ատելի է եղել ազգային սահմանափակությունը, այս կամ այն ազգության նկատմամբ թշնամական վերաբերմունքի անգամ ամենսփոքր արտահայտու-

թյունը: Դրանք եղել են Դեմիրճյանի ամենաբնորոշ գծերը:

Հատորում զետեղված մյուս հուշերի շարքում տեղ են գտել նաև Դ. Դեմիրճյանի քրոջ դուստր Նատալյա Շիրինյանի և բժիշկ Հարություն Հովհաննիսյանի գրառումները, որոնք մշտապես կապված են եղել գրողի հետ, մասնակցել են նրա տանը կազմակերպվող մտերմական հավաքույթներին, լսել դեմիրճյանական իմաստություններն ու կատակախառն սրամտությունները:

Գրքում նկատելի է նաև մեկ այլ համագամանք. գրեթե բոլոր գրողներն իրենց հուշերում Դեմիրճյանին ընդունում են որպես նահապետ, ուսուցիչ ու դաստիարակ և գրականության մեջ առաջնորդվում են նրա խորհուրդներով ու դասերով: Նրանք նշում են, որ Դեմիրճյանը պահանջկոտ է եղել երիտասարդ գրողների նկատմամբ, բայց ամենից առաջ նա խստապահանջ է եղել իր ստեղծագործությունների նկատմամբ, ընդունել է իր երկերի մասին արված արդարացի ու անաչառ քննադատական դիտողությունները և աշխատել է վերացնել նկատված թերությունները: Նա տքնաջան աշխատանք է կատարել «Վարդանանք» պատմավեպի վրա, հատկապես նրա շուրջ ծավալված քննադատությունից հետո, ամեն ջանք գործադրել է անխոցելի դարձնել վեպի գաղափարական բովանդակությունն ու պատմական հավաստիությունը, հղկել լեզուն ու ոճը և, այդպիսով, ստեղծել անթերի վեպ:

Այսօր իբրև թևավոր խոսքեր կարելի է օգտագործել նրա պատգամները սկսնակներին. «Լավ ես գրում, միայն աշխատիր քիչ գրել» կամ «Գրիր միայն այն ժամանակ, երբ չես կարող չգրել» և այլն: Դեմիրճյանական նման խտացումների, ասույթների ու մտքերի կարելի է համդիպել սույն գրքի բազմաթիվ էջերում, որոնք նա արտաբերել է իր ելույթներում, մարդկանց հետ ունեցած գրույցներում և այլուր: Դրանք մեկ անգամ ևս ցույց են տալիս Դեմիրճյան-գրողի ու մտածողի, մշակութային գործչի ու քննադատի՝ շրջապատը դիտարկելու, կյանքի խորքերը թափանցելու և այնտեղից ձուլլ ու մնայուն արժեքներ համելու վարպետության մասին:

«Ժամանակակիցները Դերենիկ Դեմիրճյանի մասին» հուշերի գիրքը ուսանելի շատ բան ունի իր մեջ, որն ընթերցելով մենք

այսօր լայն պատկերացում ենք կազմում գրողի ապրած տարիների ու նրան շրջապատող մարդկանց մասին, այն ժամանակի, միջավայրի ու մթնոլորտի մասին, որոնցում տեղի են ունեցել բազմաթիվ խոշոր իրադարձություններ, հասարակական-քաղաքական ու գրական-մշակութային վայրէջքներ ու վերելքներ, հաղորդակից ենք դառնում ու ծանոթանում գրողի կյանքի այլևայլ մանրամասներին, նրա նախասիրություններին ու բնավորության գծերին, այս կամ այն երևույթի մասին նրա մտքերին ու կարծիքներին, և վերջապես Դեմիրճյանը ընթերցողին ներկայանում է այնպես, ինչպես եղել ու ապրել է կյանքում, կենցաղում ու շրջապատում: Եվ եթե ճշմարտություն է, որ մեծ գրողները ամեն մի նոր դարաշրջանում նոր սերունդների կողմից նորովի են հայտնագործվում, և նոր ուսումնասիրողները միշտ էլ կարողանում են բացահայտել այն, ինչը չէին նկատել իրենց նախորդները, ապա կարող ենք ասել, որ հուշերի ներկա ժողովածուն շատ բան կհուշի գալիքի դեմիրճյանագետներին և կօգնի նրանց՝ ավելի մտոկիկից դիտարկելու և ավելի խորն ու բազմակողմանիորեն ուսումնասիրելու հայ մեծանուն դասականի կյանքն ու գործը, նրա թողած գրական հարուստ ժառանգությունը:

Արդ, մի երկու խոսք գրքում նկատված թերությունների մասին: Ժողովածուն առանձին վերցված լույս է տեսել պատշաճ մակարդակով, շարվածքը, էջատումը և գեղարվեստական ձևավորումը կատարվել են համակարգիչով, իսկ տպագրությունը՝ օֆսեթ եղանակով: Սակայն, երբ այն համեմատում ենք նույն մատենաշարով հրատարակված մյուս գրքերի հետ, ապա տեսնում ենք, որ ունի որոշակի թերություններ: Նախ նշենք, որ թղթի խնայողության նպատակով բոլոր հեղինակների նյութերը գրքում շարունակում են մեկը մյուսին, այնինչ՝ ցանկալի կլիներ, որ դրանք սկսվեին նոր էջերից:

Նման հրատարակությունները սովորաբար ունենում են նաև լուսանկարային ներդրումներ, վավերագրերի, նամակների, ձեռագրերի ու գրքերի ընծայագրերի առանձին վերարտադրություններ (ֆաքսիմիլներ) և այլն: Ցավոք, դրանք այս ժողովածուում իսպառ բացակայում են: Գրքի կազմը ևս զիջում է մատենաշարային հրատարակությունների միատեսակ ձևավորված

ամուր կազմերին:

Ինչպես գրքի խմբագիրն է նշում իր մուտքի խոսքում, ժողովածուն հրատարակվելու ընթացքում, ծավալի սահմանափակության պատճառով, հարկադրված հանվել են մեծ թվով հուշեր, իսկ տպագրվածների մի մասի մեջ էլ կատարվել են մասնակի կրճատումներ, որոնց հետևանքով տուժել են նաև ծանոթագրությունները և ըստ անհրաժեշտության չեն լուսաբանում տեքստերում օգտագործված շատ արտահայտություններ ու հասկացություններ, չկան լրացուցիչ տեղեկություններ ինչպես հուշագիրների, այնպես էլ հուշերի գրության այլևայլ հանգամանքների մասին: Իսկ դրանք անհրաժեշտ են ու ցանկալի նման հրատարակություններում: Այդ ասպարեզում մենք ունենք և՛ օրինակներ, և՛ հարուստ փորձ:

Վերջում, ըստ արժանվույն գնահատելով «Ջավախք» հայրենակցական-բարե-

գործական միության հովանավորությունը, նրա դերը ժողովածուն լույս ընծայելու գործում, միաժամանակ չենք կարող չնշել, որ տնտեսական ու նյութական առկա դժվարությունները չպետք է ազդեին մի գրքի հրատարակության վրա, որն անմիջապես կապված է Ջավախքից սերված մի այնպիսի դասականի անվան հետ, ինչպիսին Գ. Դեմիրճյանն է: Ոչինչ չպետք է խնայվեր նրա մասին գրված հուշերը ավելի լավ տպագրելու համար, մանավանդ որ այդպիսի հրատարակությունները եզակի են և իրականացվում են մեծ ջանքերով ու պահանջում են երկար ժամանակ: Մնում է սպասել Գ. Դեմիրճյանի գալիք հոբելյաններին՝ ներկա գիրքը՝ կրճատումները վերականգնված, լրացված ու ավելի շքեղ տպագրված տեսնելու ակնկալիքով:

**Վ. Ս. ՄԱՂԱՅԱՆ**